

ԳՐԱԲԱՐԻՑ ԱՎԱՆԴԱԾ ՅՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ

(Մաս Ա. հոլովումից չկախված հնչյունափոխությունները)

Որևէ այբուբենի հորինման ու սկզբնական կիրարկման ժամանակաշրջանում գրությունը համապատասխանել է արտասանությանը*:

Մենք նախագրային հայերենի արտասանությանը ծանոթ չենք: Որպես գրավոր հայերենի սկիզբ՝ հիմք ենք ընդունում այն ինքնուրույն և թարգմանական երկերը, որոնք ստեղծվել են Մաշտոցի ստեղծած գրերն անմիջապես կիրարկելուց հետո:

Սակայն ինչպես ամեն մի լեզվի, այդպես էլ հայերենի արտասանությունը անփոփոխ չի մնացել գրաբար համարվող ժամանակահատվածում (մինչև 12-րդ դար): Ժամանակի ընթացքում մի քանի պատճառներով արտասանությունը փոփոխություն է կրում՝ հեռանալով գրությունից: Ենթարկվելով այդպիսի փոփոխությունների՝ գրաբարը ևս ձեռք է բերել արտասանության նոր կանոններ, որոնք ավանդաբար հասել են մեզ:

Գրաբարի շրջանում հնչյունափոխություն կատարվել է թե ծայնավորների ու բաղաձայնների, թե գրաբարին հատուկ երկբարբառների ու եռբարբառների մեջ: Թեև այդ հնչյունափոխություններից յուրաքանչյուրի սկսման ժամանակը մեզ հայտնի չէ, փորձենք ի մի բերել արդի գրական արևելահայերենի այն հնչյունափոխությունները, որոնք սկիզբ են առել գրաբարում:

Ա) Հնչյունափոխություններ ծայնավորների մեջ

Արդի գրական արևելահայերենում ծայնավորները 6-ն են (ա, է, ը, ի, ու, օ), որոնցից 1-ինը, 3-րդը և 4-րդը պատկերվում են մեկական և միշտ նույն գրերով (ա, ը, ի), 2-րդը՝ մեկական, բայց մի դեպքում՝ է, մի այլ դեպքում՝ ե գրերով, 6-րդը՝ մեկական, բայց մի դեպքում՝ օ, մի այլ դեպքում՝ ո գրերով, 5-րդը՝ 2 գրերի (ո, լ) համադրությամբ (ու), որի 2-րդ գիրը (լ) 1922 և 1940 թթ. ուղղագրություններում ինքնուրույնաբար չի գործածվում (որպես շեղում 1940 թ. ուղղագրության՝ կան դեպքեր նրա ինքնուրույն օգտագործման, որի մասին քիչ հետո):

- 1) Ի(ւ) գիրը ինքնուրույնաբար գործածել են՝ արտահայտելով կամ ու, կամ լ հնչյունները (և>վ հնչյունափոխության մասին՝ քիչ հետո):
- 2) Ու հնչյունի ձևավորման և նրա՝ 1 գրով, թե 2 գրերով պատկերման մասին կա երկու կարծիք. ա) գրաբարում սկզբնապես ու ծայնավոր չի եղել. եղել է երկբարբառ՝ ոու (օու) արտասանությամբ. որը գրության մեջ արտահայտել են օ արտասանվող ո գրի և ու արտասանվող լ գրի համադրությամբ (ու), բ) հիշյալ գրերի համադրությամբ արտահայտել են պարզ ծայնավոր՝ ու-ն:

*Տե՛ս օրինակ, "Малая советская энциклопедия", т. I, 1958, М., с. 301.

Ըստ առաջին կարծիքի, օրինակ թուական, կատու, կոռուել, նուել, շինու-
ւած, ուսանել, պատուել, տուն գրությամբ բառերը ի սկզբանե արտասանել են
թուական, կատու, կոռուել, նուել, շինուած, օուսանել, պատուուել,
տուուն: Կա կարծիք, որ օու արտասանած ու երկբարբառը ծայնավորի վերածե-
լուց հետո պիտի արտահայտեին միայն մի (ու հնչած) գրով, այսինքն՝ ւ—ով (11):

3) Օ հնչած ո—ի վերածումը վո հնչյունակապակցության

Գրաբարի ինչ—որ փուլում միշտ օ արտասանած ո գիրը բառասկզբում (բա-
ցի ով, ովախս, ովկիանոս և ովսաննա բառերից) սկսել են արտասանել վո:

4) Իսկ որ ու հնչյունը ի սկզբանե պատկերել են միայն ւ գրով, ապացուցում են
ա) է(մոտավորապես)—ու հնչած եւ երկբարբառը [ալելու, աղբելու, առեւծ, բելու, հա-
բելու, հարելու, մեւս (արտասանել են ալելու, աղբելու, առեւծ, բելու, հա-
բելու, մեւս)] և

բ) իու հնչած իւ երկբարբառը [ծիւն, սիւն, նիւթ (արտասանել են ծիւն,
սիւն, նիւթ)]:

5) է(մոտավորապես)—ու հնչած եւ երկբարբառի վերածումը իու հնչած իւ
երկբարբառի

Ալելու, աղբելու, առեւծ, բելու, հարելու, մեւս գրությունները արտասանել
են, ապա և գրավորում արտահայտել որպես ալիուր, աղբիւր, առիւծ, բիւր,
հարիւր, միւս:

6) ՈՒ հնչյունի վերածումը վ հնչյունի

ՈՒ հնչյունը ծայնավորից առաջ փակ վանկում վերածել են վ հնչյունի:
Գրավորում այդ վ հնչյունը արտահայտել են

ա) ո և ւ գրերի կապակցումով (ու)՝ թուական, կոռուել, նուել, շինուած,
պատուել (արտասանել են թվական, կովել, նվեր, շինված, պատվեր),

բ) միայն ւ գրով՝ թաւ, կաքաւ, կտաւ, հաւ, նաւ (արտասանել են թավ, կա-
քավ, կտավ, հավ, նավ), ինչպես նաև նաւթ, աղամնի (արտասանել են
նավթ, աղավնի) և այլն:

7) ՈՒ հնչյունի վերածումը ը—ի

Որոշ բառերի ու հնչյունը նրանց բառածներում վերածել են ը—ի, ինչը, սա-
կայն, չեն պատկերել. օրինակ՝ անբուն — անբ(ը)նություն, իմաստուն —
իմաստ(ը)նանալ (7. 30):

8) ՈՒ հնչյունի սղումը

ՈՒ—ն տղվում է իրեն հաջորդած ութիւն (1920 և 1940 թվականների ուղղա-
գրությամբ և արտասանությամբ՝ ություն) վերջածանցից առաջ. օրինակ՝
կծուութիւն (կծուություն)—կծութիւն (կծություն) [7.30]:

9) սՈՒ հնչած աւ երկբարբառի հնչյունափոխությունը ալ—ի, ալ—ինն
էլ օ—ի (11)

Սակայն նույն ա և նույն ւ գրերի համադրությունը (աւ) պարզեցնելով (փակ
վանկում), վերածել են օ հնչյունի, ինչը օրինաչափության է վերածված եղել
դեռևս 10—րդ դարի սկզբում, ու թեև միշտ օ է արտասանվել ո գիրը, սակայն
պարզեցրած համադրությունը արտահայտել են հունական այբուբենի օմիկ-
րոն անունը կրող գրով (օ), ինչը Մաշտոցի գրած այբուբենի մեջ մտցրել են
12—րդ դարից հետո (4.8): Այդպես են առաջացել արօր, գօրք, տօթ (ըստ 1922
և 1940 թվականների ուղղագրությունների՝ արոր, գորք, տոթ), օծ, օր և այլ
արտասանություններ:

Կա կարծիք, որ հնչյունափոխած երկբարբառը (աւ) վերոհիշյալ բառերում արտասանել են նախ աու, ապա՝ ավ (11):

Կա նաև կարծիք, որ օ հնչյունի վերածած աւ (արդեն՝ ավ արտասանությամբ) երկբարբառի փոխարեն որոշել են գրել հունական այբուբենի օմիկրոն անունը կրող գիրը (օ), քանզի հնչյունափոխած այդ երկբարբառը (աւ) հանդես է եկել նաև բառասկզբում, իսկ բառասկզբում աւ-ի փոխարեն ո տեղադրելը արդեն կարող էին արտասանել ոչ թե օ, այլ՝ վո (11):

10) *հնքնուրույն բառերի սկզբի ծայնավոր ե-ի վերածումը յե հնչյունակապակցության*

Վաղուց ի վեր յե է հնչում ինքնուրույն բառերը (եմ, ես, ենք, եք, են բայերը օժանդակ են) սկսող ե-ն, որը մի ժամանակ թե բառասկզբում, թե՛ բառամիջում արտասանել են իբրև ծայնավոր:

11) *Քանի որ մի կողմից յե է հնչել ինքնուրույն բառերը սկսող ե-ն, իսկ մյուս կողմից ու հնչած ի-ն որոշ դեպքերում ընկալել են իբրև վ հնչյուն, այդպես էլ է (մոտավորապես)՝ ու հնչած եւ շաղկապը սկսել են արտասանել որպես յեվ (11):*

Ի սկզբանե միայն շաղկապի համար ստեղծել են և կրճատա-կցագիրը (վերցրել են այս դեպքում յե արտասանվող ե-ի առաջին կեսը՝ առանց գծիկի, և այս դեպքում վ արտասանվող ի-ն):

Թե 1922 և թե 1940 թթ. ուղղագրություններում մի դեպքում ու, մի այլ դեպքում վ արտասանվող ի-ն օգտագործում են ո գրից հետո՝ արտահայտելով ու հնչյունը, ինչպես նաև՝ և կրճատա-կցագրի (և) մեջ:

Սակայն հայերենագիր որոշ գրամեքենաների և որոշ համակարգիչների հայերեն գրաշարքերի մեջ և կրճատա-կցագրի բացակայության դեպքում օգտագործում են ե և ւ գրակապակցությունը (11):

12) *Է-ի հնչյունափոխությունը ծայնավոր ե-ի*

Թեև այսօր նույն կերպ են արտասանում է-ն և բառամիջի ե-ն, բայց, հասկանալի է, որ եթե նրանք ի սկզբանե արտասանած լինեին նույն կերպ, ապա նույն հնչյունը պատկերելու համար հարկ չէր լինի հորինելու 2 գրեր: Ի տարբերություն ծայնավոր ե-ի՝ է-ն շեշտը կորցնելիս հնչյունափոխվում է ի-ի. օրինակ՝ դէզ (արտասանում ենք դեզ) – դիզել, կէս (արտասանում ենք կես) – կիսել, հանդէս (արտասանում ենք հանդես) – հանդիսական:

13) *Ծայնավոր ե-ի հնչյունափոխությունը ի-ի*

Դեւ (դեվ հնչմամբ) բառի ածանցումներում ե-ն հնչյունափոխվել է ի-ի. օրինակ՝ դիւական (դիվական հնչմամբ), դիւահար (դիվահար հնչմամբ):

14) *Ծայնավոր ե-ի հնչյունափոխությունը յ ծայնորդի*

Բառամիջում ի հայտ եկած եա երկբարբառը վերածվել է յա հնչյունակապակցության. ուրեմն՝ ծայնավոր ե-ն հնչյունափոխվել է յ ծայնորդի, օրինակ՝ վայրկեան, քառեակ (արտասանել և արտասանում են՝ վայրկյան, քառյակ):

15) *Գաղտնավանկ ը-ի հնչյունափոխությունը ծայնավոր ե-ի*

Որոշ բառերում գաղտնավանկ ը-ն վերածել են ծայնավոր ե-ի. օրինակ՝ աստ(ը)ղ – աստեղային, եզ(ը)ր – եզերք (7.29):

16) *Ը-ի սղումը*

Ըստ նախդրի առաջին հնչյունը սղել են որոշ բառերում. օրինակ՝ ըստանձնել – ստանձնել:

17) **Ի-ի հնչյունափոխությունը ը-ի**

Ի-ն, փակ վանկում շեշտը կորցնելով, հնչյունափոխվում է **ը-ի**, որը ա) գրության մեջ արտահայտվում է օրինակ՝ **իղծ – ըղծական, ինչ – ընչազուրկ, ընչաքաղց**:

բ) գրության մեջ արտահայտվում է միայն տվյալ բառը վանկատելիս (կամ վանկատմամբ տողադարձելիս). օրինակ՝ **գիր – զը-րել, խինդ – խըն-դալ, միրգ — մըր-գատու, քիրտն – քըր-տինք**:

18) **Ի-ի հնչյունափոխությունը յ ծայնորդի**

Բառամիջում ի հայտ եկած իւ երկբարբառը արտասանել են որպես յու հնչյունակապակցություն, ուրեմն՝ **ի-ն** հնչյունափոխվել է յ ծայնորդի. օրինակ՝ **թնդիւն – թնդյուն, հիւսել – հյուսել**:

19) **Ի-ի հնչյունափոխությունը յ-ի, յ-ինն էլ՝ հ-ի**

Գրաբարի նախդիրներից **ի-ն**, երբ հանդես է եկել ծայնավորից առաջ և նրա հետ սերտ արտասանությամբ, հնչյունափոխվել է յ-ի: Սերտ արտասանության պատճառով էլ յ-ն գրել են բառից անանջատ. օրինակ՝ **ի օգուտ – յօգուտ, ի իրավի – յիրավի**: Սակայն հետզհետե բառակապակցության այդ յ-ն արտասանել են **հ**, բայց արդեն բազմաթիվ դարեր հ արտասանվող յ-ն չեն փոխարինել **հ-ով**: Միայն 1922-ի ուղղագրական փոփոխությամբ ի նախդիրից առաջացած յ-ն փոխարինել են **հ-ով**, ինչը կրկնել են 1940-ի ուղղագրության մեջ:

20) **Յ հնչյունով փոխարինված ի հնչյունի վերականգնումը**

Արդի գրական հայերենում ծայնավորով սկսվող բառերից առաջ ի հնչյունին (նախդիրին) փոխարինած յ հնչյունի փոխարեն հաճախ կիրառվում է նրա նախնական վիճակը՝ ի հնչյունը (նախդիրը). օրինակ՝ ի երջանկություն ժողովրդի... ի օգուտ, քանզի խուսափում են յ գրելուց, որովհետև նա չի արտասանվի **հ**, իսկ **հ** գրելուց էլ խուսափում են, որովհետև նա չի ընկալվի որպես նախդիր (6.126):

21) **Ի-ի սղումը**

Ի –ն սղվում է

ա) որոշ բառերում. օրինակ՝ **վեր – վերին – վերնատուն** (ոչ թե վերինատուն),
բ) որոշ բառածներում. օրինակ՝ **թշնամի-թշնամական** (ոչ թե թշնամիական), **մարմին-մարմնական** (ոչ թե մարմինական), **մարդ-մարդիկ-մարդկային** (ոչ թե մարդիկային):

22) **Իա հնչյունակապակցության վերածումը ծայնավոր ե-ի**

Եթե **ա-ն** հաջորդում է բաց վանկի **ի-ին**, ապա **իա** հնչյունակապակցությունը վերածվում է ծայնավոր **ե-ի**. օրինակ՝ **պատանի-պատանիական-պատանեկան, այգի-այգիակութ-այգեկութ, մի-միակին** (մի կին ունեցող) – **մեկին, տարի-տարիական-տարեկան**:

23) **Օ հնչած ո-ի հնչյունափոխությունը ու-ի**

Բառամիջում ի հայտ եկած ոյ երկբարբառը վերածվել է ույ հնչյունակապակցության, ուրեմն՝ **ծայնավոր ո-ն** հնչյունափոխվել է **ու-ի**. օրինակ՝ **լոյս, համբոյր, կոյս, քոյր** (արտասանել և արտասանում են՝ **լույս, համբույր, կույս, քույր**):

24) **Ա ծայնավորի սղումը**

– **Ահա՛վասիկ** (եղել է **ահա՛վասիկ**, որի իրար հաջորդող **ա-երից** մեկը սղվել է դեռ գրաբարի այս կամ այն փուլում),

– Ահա՛վաղիկ (եղել է ահա՛վաղիկ, որի իրար հաջորդող ա–երից մեկը սղվել է դեռ զրաբարի այս կամ այն փուլում),

– Ահա՛վանիկ (եղել է ահա՛վանիկ, որի իրար հաջորդող ա–երից մեկը սղվել է դեռ զրաբարի այս կամ այն փուլում):

– Գրե՛թե (եղել է գրեա՛ (գրի՛ր) թէ. հրամայական բառի վերջին հնչյունը սղվել է դեռ զրաբարում՝ միաժամանակ իր շեշտը փոխանցելով նախորդ հնչյունին):

25) Ա–ի սղումը եա (մոտավորապես էա հնչած) երկբարբառում

Ա–ն սղվում է նաև եա երկբարբառում, ինչը, ոմանց կարծիքով, նրա շեշտակողույս լինելու հետևանքով է (4.14), փաստորեն՝ սղվել է նրան հաջորդած ա հնչյունը (11). օրինակ՝ դեակ – դեկ, ատեամ – առեմ (7.41), վայրկեան – վայրկենապես:

Բ) Երկու հնչյունափոխություններ եւ (մոտավորապես էու հնչած) երկբարբառում

Քանի որ միշտ մոտավորապես է հնչած ե–ն ինքնուրույն բառերի (բացի օժանդակ բայերից) սկզբում վերածվել է յե հնչյունակապակցության, իսկ ու հնչած լ–ն որոշ դեպքերում հնչյունափոխվել է վ–ի, ապա, փաստորեն, է (մոտավորապես –ու) հնչած երկբարբառի երկու հնչյուններն էլ հնչյունափոխվել են (11):

Գ) Հնչյունափոխություն եայ (մոտավորապես էայ հնչած) եռաբարբառում

Բազմաթիվ բառերի վերջում ի հայտ եկած, մոտավորապես էայ հնչած եայ եռաբարբառը վերածել են է–ի. օրինակ՝ ադամանդեայ – ադամանդէ, արծաթեայ – արծաթէ:

Դ) Հնչյունափոխություն եաւ (մոտավորապես էաու հնչած) եռաբարբառում

Որոշ բառերում սղվել է եաւ եռաբարբառի ա–ն. օրինակ՝ գեաւդ–ը, որը մի ժամանակ հնչյունափոխվել էր գեօդ–ի, ի հայտ է եկել նաև գեւդ ձեռով: Գեւդ–ն էլ վերածվել է գիւդ–ի (արդեն խոսել ենք եւ երկբարբառը իւ երկբարբառի հետ նույնանալու մասին):

Ե) Հնչյունափոխություններ բաղաձայնների մեջ

Արդի գրական հայերենում բաղաձայններն են՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ծ, դ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ: Վերջին գիրը չի եղել զրաբարում և մի քանի բարբառներում: Բառասկզբում յէ հնչող ե–ն և բառասկզբում վօ հնչող ո–ն առանձին հնչյուններ չեն, որպեսզի դասվեն բաղաձայնների շարքում:

Դ հնչյունի սղումը

Ընդ նախորդի վերջին հնչյունը որոշ բառածներում սղել են՝

ա) նրան նախորդող հնչյունի (ն) փոխմամբ (մ-ի). օրինակ՝ ընդբերանել-ըմբերանել, ընդթոշխնել-ըմթոշխնել (7.36),

բ) առանց նրան նախորդող հնչյունի (ն) փոխման. օրինակ՝ ընդկեր-ընկեր, ընդկրկել-ընկրկել, ընդծեռնել-ընծեռնել, ընդտանի-ընտանի (7.36):

2) Լ ծայնորդի արտասանությունները

Լ ծայնորդը գրաբարում ի սկզբանե պիտի ունեցած լինի մի տեսակի արտասանություն (11), սակայն մեզ անհայտ ժամանակից նա ունեցել է երկուսը՝ առաջնալեզվային (փափուկ արտասանությամբ, ինչպես այսօրվանը) և կատկային (կոշտ արտասանությամբ): Հետևաբար առաջացել են մի քանի հատուկ և մի քանի հասարակ անունների զուգահեռ արտասանություններ. օրինակ՝ Ալեքսանդր-Աղեքսանդր, Նիկոլայ(ոս)-Նիկող(այ)ոս, Լեւոն-Ղեւոնդ, Ելիզավետա-Եղիսաբեթ, Մագդալինա-Մագթաղինե, Զիլ-ջիղ:

3) Դ-ի սղումը

Որոշ բառերում սկզբի հ-ն սղել են. օրինակ՝ համբարել-ամբարել:

4) Յ-ի սղումը

Յ ծայնորդը որոշ բառերի վերջում դադարել է արտասանվելուց: Ընծայ-ը, ծառայ-ը, պողոտայ-ը, երեկոյ-ը սկսել են արտասանել (առանց գրությունը փոխելու) ընծա, ծառա, պողոտա, երեկո (1922 և 1940 թվականների ուղղագրություններով յ ծայնորդը գրությունից նույնպես հանված է): Ըստ արտասանության՝ բառավերջի յ ծայնորդի անկումը օրինաչափության է վերածվել արդեն 9-րդ դարում (4.9):

5) Յ-ի հնչյունափոխությունը Դ-ի

Յ ծայնորդը որոշ բառերի սկզբում հնչյունափոխվել է հ-ի: Յաճախ-ը, յիշել-ը, յորդ-ը սկսել են արտասանել հաճախ, հիշել, հորդ, բայց միայն 1922 և 1940 թվականների ուղղագրություններով է յ գիրը փոխարինվել հ գրով:

6) Շ հնչյունի մասնատումը

Որոշ բառերում չ հնչյունը մասնատել են՝ վերածելով թշ հնչյունակապակցության օրինակ՝ չուառ-թշուառ (թշուառ-ի ու-ն հետո արտասանել և արտասանում են վ):

7) Ր-ի վերածումը ռ-ի

Ր-ն որոշ բառածներում վերածել են ռ-ի՝

ա) նրան հաջորդող հնչյունի (ծ) սղմամբ. օրինակ՝ բարծր-բառնակ, դարծ-դառնակ,

բ) առանց նրան հաջորդող հնչյունի սղման. օրինակ՝ երեք - եռեակ (արտասանել և արտասանում են՝ եոյակ),

գ) նրան հաջորդող հնչյունի (ց) փոխմամբ (ն). օրինակ՝ ընթերցել-ընթեռնելի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արեղյան Ս., Գրաբարի դասագիրք, 1-ին գիրք, Թիֆլիս, 1915, էջ 123-124:
2. Արեղյան Ս., Գրաբարի դասագիրք, 2-րդ գիրք, Թիֆլիս, 1916, էջ 116:
3. Արեղյան Ս., Գրաբարի քերականություն, 2-րդ (վերանշակված) հրատ., Երևան, 1936, Պետհրատ, էջ 9-16:
4. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, 3-րդ հրատ., Երևան, 1964, Հայպետուսմանկ-հրատ, էջ 3-15:
5. Առաքելյան Ա., Գրաբարի իմբնությունն ձեռնարկ, Երևան, 1937, էջ 11-12:
6. Կանայան Խ., Գրաբարի նախդիրների կիրառությունը ժամանակակից հայերենում, [Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու», ք. 5, Երևան, 1958, էջ 121-137, կա նաև առանձնատիպը]:
7. Համբարձումյան Վ., Գրաբարի իմբնություն, Երևան, 1999, էջ 24-44:
8. Ղազարյան Ա., Հայոց գրական լեզվի պատմություն, Երևան, 1961, Պետհրատ, էջ 169-187:
9. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրություն, Երևան, 1937, էջ 91-95:
10. Շարախանյան Պ., Գրաբարի ուղեցույց, Երևան, 1967, էջ 5-12:
11. Հարությունյան-Կանայան Ժ., Հայերենի ինչյունափոխությունների պատճառները (անտիպ):

Г. Григорян

УНАСЛЕДОВАННЫЕ ИЗ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЗВУКОВЫЕ ИЗМЕНЕНИЯ В СОВРЕМЕННОМ ВОСТОЧНОАРМЯНСКОМ ЛИТЕРАТУРНОМ ЯЗЫКЕ

В статье впервые дана классификация унаследованных из древнеармянского звуковых изменений в современном восточноармянском литературном языке. Рассмотрены изменения гласных, дифтонгов, трифтонгов и согласных.

G Grigoryan

SOUND CHANGES INHERITED FROM THE OLD ARMENIAN IN CONTEMPORARY EASTERN ARMENIAN LITERARY LANGUAGE

In the article the classification of sound changes, inherited from the Old Armenian, in contemporary literary Eastern Armenian language is presented for the first time. The changes of vowels, diphthongs, triphthongs, and consonants are discussed